

Սակայն բացորոշ է թե՛ Մեթեանի մտքին մեջ ոչինչ աւելի ներկայ ու գործօն է, քան գաղափարը. թե՛ Արդարին ու Բարության խորին իմացումը ունի. թե՛ Մեթեան կը մնայ Տեսլականի մարդ:

Եւ որովհետեւ արուեստի եւ բարոյականի շատ մը տեսլապաշտներու պէս ինքն ալ փիլիսոփայ չէ բարեբախտաբար, այլ բանաստեղծ, այդ տեսլապաշտութիւնը թոյլ կուտայ իրեն դասնիլ պէտքը եւ հնարաւորութիւնն արդարութեան, բարութեան, եղբայրութեան երանանդորր վիճակի մը, որուն՝ այժմու պայմաններով իրագործման մասին յոռետես է իրաւամբ: Արդարեւ, մէկ կողմէ *rationaliste* մը լոկ ըլլալ, եւ միւս կողմէ տաղանդի ու կեանքի տեսլապաշտ մը եւ տեսնել ահաւորութիւնն ու զագրութիւնն աշխարհին, եւ դեռ յամառ լաւատես մը ըլլալ անկարելի է: Անէութեան իմաստով թիրիմացուած Նիրվանան¹⁰,– Եղիայինը,– եւ ունայնութեան գաղափարը յաճախած են իրեն, եւ ինչպէս իր վայրկեանները տխրեցուցած նոյնպէս իրենց իսկութեան օշինդրը խառնած իր քերթուածներէն մէկ քանիին որ Մեթեանի երկին աւելի քան հարիւր կտորներուն մէջ մասնաւոր տասնեակ մը կրնան ձեւացնել: Բայց որքա՛ն աւելի մեծ է իր մէջ խղճի կեանքին նկատմամբ իր յարգալիր ու հիացական համոզումը. որքա՛ն ալ աշխարհի տեսարանը մերթ այդ դասնանքը դեղեւեցնէ, սակայն անիկա գլխաւորն է այն ձեւերուն զոր Մեթեանի մտածողութիւնը խիստ յաճախ կը զգենու: Հոգեւին բարեպաշտ,– վասն զի աւելի քան քսան հատուածներ իր երկին մէջ այդ բարոյական տեսլականը կը յայտնեն, եւ մնացեալին մէջ ոչինչ կայ որ հակասէ այդ համոզման – գրագէտը ցոյց կուտայ թէ հոս բանականութեան հետ համաձայն է անվերապաօրէն, եւ ստուգիւ իր էջերուն ամենամեծ մասին վրայ կը թուի գաղտ հիմն նշուել բարձրագոյն մտածողութեան մը կնիքը:– Աւելորդ է ըսել թերեւս, թէ պէտք չկայ որ արուեստի մարդը անպատճառ եւ ուղղակի բարոյախօսէ, այլ պէտք է որ իր մտածութեանց արմատն իսկ եղած ըլլայ անայլաստեղծի եւ անվկանդ ծանօթութիւնը բո՛ւն